Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Նունե Ասրյան

Ուսուցիչ՝ Կարինե Վարդանյան

Երևան 2023

**Բովանդակություն**

Ներածություն…….....…..… .....3

**Գլուխ 1 Դասի պլանավորում, պլանավորման տեսական հիմքերը** .....5

1.1. Դասի կարևոր բաղադրիչները .....11

1.3. Դասի պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը.....12

**Գլուխ 2.Հետազոտական աշխատանք**.....15

Եզրակացություն .....18

Գրականության ցանկ. .....19

## Ներածություն

Դասը մանկավարժական գործընթացի կարևոր բաղադրիչն է: Դասի ճիշտ պլանավորումը կարելի է համարել ուսուցչի մասնագիտական որակներից մեկը: Դասի պլանավորման ժամանակ պետք է ուսուցիչն իր առջև ունենա ձևավորված նպատակներ և գտնի այդ նպատակներին հասնելու ճիշտ ուղիներ: Դասը պետք է պլանավորել փուլ առ փուլ և պլանավորման ժամանակ կարևոր է հաշվի առնել դասարանի և դասի թեմայի առանձնահատկությունները: Դասի պլանավորման եղանակների կամ մեթոդների ճիշտ ընտրությունը և մանկավարժական հնարքները կօգնեն ուսուցչին հասնել սահմանված նպատակներն: Յուրաքանչյուր դաս պլանավորելիս պետք է հաշվի առնել ժամանակակից ուսուցչի առջև դրված պահանջները: Մանկավարժը պետք է նյութը մատուցելիս աշակերտի ուշադրությունը սևեռի (ուղղորդի) դասի կարևոր հատվածների վրա եւ կարողանա զարգացնել հմտություններ, որպեսզի աշակերտը կարողանա ինքնուրույն փնտրելել և գտնել, ստեղծագործել:

Հայոց լեզվի դասավանդման ժամանակ կարևոր է, որպեսզի ուսուցիչը կարողանա ձևավորել աշակերտների լեզվամտածողությունը, հղկի նրանց խոսքը: Գրականության դասավանդման ժամանակ ուսուցիչը կարող է մտածված մեթոդների շնորհիվ զարգացնել նրանց ստեղծագործելու, համեմատելու կարողությունները, ձեւավորել աշխարհայացք:

Ըստ իս յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կարողանա մանկավարժական ցանկացած իրավիճակում եւ ցանկացած բովանդակության պարագայում պլանավորել եւ անցկացնել արդյունավետ դաս, կողմնորոշվել ոչ ստանդարտ իրավիճակներում եւ կիրառել մանկավարժորեն արդարացված քայլեր, համադրել իր ստեղծագործական կարողությունները, մեթոդական եւ առարկայական գիտելիքներն ու դրանք կիրառել ուսումնական կոնկրետ իրավիճակին համապատասխան:

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդող առարկայի խորը և բազմակողմանի իմացությունը, այլև դասավանդման նպատակների, խնդիրների դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողությունը և հմտությունը:

**Հետազոտության խնդիրներն են՝**

Բացահայտել դասի պլանավորման արդյունավետ եղանակներ, որոնք խթան կհանդիսանան ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Մատնանշել մեթոդական այնպիսի նշաններ, որոմք սովորողների մոտ կառաջացնեն հետաքրքրություն առարկայի նկատմամբ:

Ուսումնասիրել համատեղ դասի պլանավորումը և գործնականում կիրառումը: Դասի արդյունավետ պլանավորմնա միջոցով բարձրացնել ուսուցման և ուսումնառության որակը:

**Հետազոտության նպատակն է՝**

Ուսումանասիրել և բացահայտել դասի պլանավորման արդյունավետ եղանակներ, որոնք խթան կհանդիսանան ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

## Գլուխ 1 Դասի պլանավորում , պլանավորման տեսական հիմքերը

**Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդները : Այն պահից , երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդներ, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը,որը կարող է բարելավել կյանքը:**

**Բ.Ֆ.Սքիներ**

Դասի ամենօրյա պլանավորումը դասի արդյունավետության հետ կապված մտահաղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է: Դասի պլանավորման բաղադրիչներն են՝

● Դասի թեման:

● Դասի նպատակները (կրթական, զարգացնող, դաստիարակչական):

● Դասի տեսակը (նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման):

● Դասի հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխում:

● Դասի ընթացքը:

● Դասի հենքային հասկացությունների ձևավորման փուլերը (հասկացությունների ներմուծում, օրինակների ներկայացում, որոնցում կիրառված են այդ հասկացությունները, հասկացությունների էական և ոչ էական առանձնահատկությունների առանձնացում, էական առանձնահատկությունների վրա հիմնված հասկացությունների սահմանում):

● Դասավանդման մեթոդները՝ բանավոր (անհատական, համընդհանուր) կամ գրավոր (ինքնուրույն, ստուգողական աշխատանք, թելադրություն) հարցում, դասախոսություն, բացատրություն, խնդրահարույց բացատրություն, պատմվածք, զրույց, զրույցի տարրերով պատմվածք, տեղեկույթի աղբյուրների հետ ինքնուրույն աշխատանք,

վարժություն, դերային խաղ, վարժությունների և խնդիրների կատարում սովորական կամ խաղային ձևով:

● Աշխատանքների ընդունում. սխեմայի կազմում, աղյուսակների հետ աշխատանք, դասագրքի տեքստի հետ աշխատանք, նկարագրությունների կազմում: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ, և պահպանվում են հետևյալ պայմանները՝

● առաջադրված խնդիրը աշակերտներին մղում է որոշակի մտավոր հնարքի կիրառման.

● աշակերտներն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ, և տվյալ հնարքի կիրառման հմտություններ

● տվյալ հնարքը համապատասխանում է նյութի բովանդակությանը և ինչքան շատ է համապատասխանում, այնքան ակտիվացնում է գործունեությունը: Աշակերտների մտավոր գործունեությունը կարելի է ակտիվացնել նաև դիդակտիկ կանոնի կիրառման շնորհիվ՝ համաձայն որի ուսուցիչն սկզբից ձևակերպում է հստակ առաջադրանք, որը աշակերտները պետք է կատարեն նյութի ուսումնասիրման ընթացքում, դրանից հետո առաջարկում է աշակերտներին կարդալ գիրքը, լսել ուսուցչի կամ հարցման համար գրատախտակի մոտ կանչված աշակերտին:

Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները պետք է ի զորու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը: Բոլոր աշակերտները պետք է առաջադրանքի կատարման համար նահրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ունենան, հակառակ դեպքում ոչ բոլոր աշակերտները կմասնակցեն դասարնում կատարվող աշխատանքներին:

Բոլոր աշակերտները պետք է համոզված լինեն, որ կկարողանան կատարել առաջադրանքը: Եթե դասավանդման մեթոդները համարենք ուսուցչի և աշակերտների փոխկապակցված գործունեության համակարգված միջոցներ, որոնք ուղղված են դասի նպատակին հասնելուն, ապա յուրաքանչյուր մեթոդի նկարագրությունը պետք է ներառի՝

● ուսուցչի ուսուցողական գործունեության նկարագրությունը.

● աշակերտի ուսումնական-ճանաչողական գործունեության նկարագրությունը.

● վերը նշվածների միջև կապը կամ միջոցները, որոնցով ուսուցչի ուսուցողական գործունեությունը ուղղորդում է աշակերտի ճանաչողական գործունեությանը:

Այսպիսի մոտեցումը պետք է իր անդրադարձն ունենա աշակերտի անձը կարևորող դասի պլանավորման վրա: Դասի պլանավորման համար կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝

● դասի սկզբի կազմակերպում.

● գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտում.

● աշխատանք ուսումնասիրվող նյութի հետ.

● ծանոթացում նոր նյութի հետ.

● գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում (կրկնություն, կատարելագործում և գիտելիքների ու կարողությունների կիրառում).

● գիտելիքների համակարգում և ընդհանրացում.

● տնային աշխատանքի կազմակերպում:

Դասի պլանն անհրաժեշտ է կազմել այնպես, որ ուսուցման պլանավորվող արդյունքները շոշափելի ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման վրա և առավել արդյունավետ իրացնեն ուսումնական ծրագրի հնարավորությունները: Դրա համար դասի պլանավորվող արդյունքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝ լինեն հստակ, իրական և բաց, այսինքն՝ աշակերտը պետք է հասկանա՝ ինչ են իրենից ուզում, և ինչպես այն կատարել:

Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել 3 գրաֆներ՝

● «Դասի կառուցվածքային տարրերը»,

● «Ուսուցչի գործունեությունը»

● «Աշակերտի գործունեությունը»:

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, ստուգման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

Ինչպե՞ս ճիշտ գրել դասի պլանը... Դասի պլանի օրինակ

● ԹԵՄԱ. թեմայի անվանումը պետք է համապատասխանի դասագրքին կամ ուսուցչի կողմից մշակված թեմատիկ բաշխմանը:

● ԴԱՍ № ../.. դասի հերթական համարը և նրա անվանումը դուրս է գրվում ուսուցչի թեմատիկ բաշխման ցանկից:

● ԴԱՍԻ ՏԻՊԸ. սահմանում է ուսուցիչը՝ ելնելով դասի նպատակներից և խնդիրներից: Կարող են լինել՝ համակցված դաս, նոր նյութի ամրապնդամն դաս, կրկնման-ընդհանրացման դաս և այլն:

● ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ. Հակիրճ թվարկել կրթական, դաստիարակչական և զարգացնողական խնդիրները:

Դասի խնդիրներին վերագրել հետևյալ բաղադրիչները՝

1. Կրթական. · գիտելիքներ (հասկացություններ, երևույթներ, մեծություններ, բանաձևեր, օրենքներ, տեսություններ և այլն) · կարողություններ. 1. առանձնահատուկ (խնդիրներ լուծել, չափագրումներ անել և այլն) 2. հանրակրթական (մենախոսական և երկխոսական գրավոր և բանավոր խոսք, ուսումնական և լրացուցիչ գրականության հետ տարաբնույթ աշխատանք, գլխավոր նյութի առանձնացում պարզ և բարդ պլանի, նշումների, ալգորիթմի, թեզի, համառոտագրության, գծապատկերի, վերապատմելու, թեմատիկ պատասխանի, համեմատական բնութագրման, զեկույցի տեսքով և այս ամենը սահմանելու կարողություն) · հմտությունը ինքնեկության հասցված կարողությունն է:

2. Դաստիարակչական. · բարոյական և էսթետիկական պատկերացումներ, համակարգված աշխարհայացք, վարքի կանոններին հետևելու և օրենքների կատարման կարողություն, · աշակերտի կարիքները, սոցիալական վարքի մոտիվացիան, արժեքները և արժեքային կողմնորոշումը, աշխարհայացքը:

3. Զարգացնող. · Խոսքի, մտածողության զարգացում, աշակերտի զգայունակության (զգայարանների միջոցով արտաքին աշխարհի ընկալման) մակարդակի զարգացում, զգացմունքային-կամային (զգացմունքներ, կամային և

ընկալման անհանգստություններ) և կարիք-մոտիվացիոն հատկանիշների զարգացում: · Մտավոր աշխատանք. վերլուծություն, համադրում, դասակարգում, դիտողականություն, եզրահանգումներ անելու կարողություն, օբյեկտների հատկությունների կարևորում, գործունեության նպատակների և միջոցների առանձնացման կարողություն, արդյունքների ստուգում, փորձի պլան կազմելու ունակություն, վարկածների առաջ քաշում:

● ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ: գործնական (սրվակներ, չափանոթներ, քանոններ, կշեռքներ և այլ չափիչ սարքեր) և լաբորատոր աշխատանքների ու ցուցադրությունների համար անհրաժեշտ սարքավորումներն են: Այդ շարքում իրենց տեղն ունեն նաև կրթական տեխնիկական միջոցները՝ պրոյեկտոր, տեսա- և ձայնանվագարկիչներ, հեռուստացույց, համակարգիչ, տեսա- և ֆոտոխցիկներ, էլեկտրոնային գրատախտակներ և այլն: Կարելի է այս ցուցակին ավելացնել նաև դիդակտիկ և ցուցադրման համար անհրաժեշտ նյութերը՝ քարտեր, թեստեր, պաստառներ, կինոնկարներ, աղյուսակներ, սկավառակներ և այլն: Գրատախտակը ևս համարվում է դասի համար անհրաժեշտ սարքավորում:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ գրվում է հակիրճ՝ ըստ դասի հիմնական փուլերի: Հաճախ դասի պլա-համառոտագրության մեջ ներկայացվում է հետևյալ բովանդակությամբ աղյուսակի տեսքով՝ 1. Կազմակերպչական մաս— 2-3 րոպե

2. Նոր գիտելիքների հաղորդում — 8-10 րոպե

3. Աշակերտների գործնական աշխատանք — 20-26 րոպե

4. Տնային առաջադրանքի հանձնարարում— 3-5 րոպե

5. Դասի ամփոփում — 1-2 րոպե Կարելի է նշել նաև այն տնային առաջադրանքը, որն աշակերտները կստանան հաջորդ դասին:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ դասի պլանի հիմնական բաղկացուցիչ մասն է: Այստեղ ծավալուն ներկայացվում է դասի վարման գործողությունների հաջորդականությունը: Այս բաժինը կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով: Այս բաժնում ներկայացվում է դասի ընթացքը, որտեղ ուսուցիչը ձևակերպում է առանձին տերմինների և հասկացությունների ձևակերպումներ, ծավալուն ներկայացնում է ուսումնական նյութը և պատկերային միջոցների կիրառման հնարքները:

Անհրաժեշտ է ուշադիր լինել պատկերներով կառուցվող մեթոդական հնարքների նկարագրման ժամանակ. այն ինչն ուսուցչին դյուրին է թվում,

աշակերտների համար հաճախ անհամեմատ դժվար է լինում: Այդ է պատճառը, որ պլանում անհրաժեշտ է որքան հնարավոր է մանրամասն նկարագրել դասարանի հետ աշխատանքի մեթոդաբանությունը: Եթե ուսուցիչն ուզում է կիրառել հայտնի մարդկանց խոսքերը, ապա դասի պլանում այդ խոսքերը պետք է վերցնել չակերտների մեջ և նշել այն գիրքը, որից վերցվել են խոսքերը, նշել գրքի հրատարակման տարեթիվը և տեղը, հրատարակչությունը, էջը:

Արդյունավետության տեսանկյունից պետք էմշակել միանգամից մի քանի դասերի պլաններ, ձևակերպել յուրաքանչյուր դասի նպատակը և այդ դասի տեղը դասերի համակարգում: Սա հնարավորություն է տալիս փոխկապակցել տարբեր դասերը և նպաստում է ժամանակի ռացիոնալ տնօրինմանը: Ինչքան միևնույն թեմայի դասերը սերտորեն են կապված միմյանց հետ, այնքան դասն ինքն իրենով ավարտուն կլինի, այնքան աշակերտների գիտելիքներն ավելի խորը կլինեն: Անհրաժեշտ է, վերլուծելով նախորդ տարիների դասի պլանները, դրանք համադրել նորի հետ: Սա հնարավորություն կտա կատարելագործել դասի փուլերը:

ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ՛ Է նախորդ տարիների աշխատանքային պլանների՝ նորի հետ չհարմարեցված կիրառումը: Դասի պլան կազմելիս պետք է հասնել դասի նպատակի, ուսումնական նյութի բովանդակության, կրթական մեթոդների և աշակերտների ճանաչողական գործունեության կազմակերպման ձևերի համապատասխանությանը: Ինչքան բարձր է այդ համապատասխանությունը յուրաքանչյուր դասին, այնքան ազդեցիկ է դասի վերջնական արդյունքը: Դասի նախապատրաստությունը նախապատրաստություն է աշակերտների մտածողությունը ղեկավարելու համար: Ուսուցչի համար շատ կարևոր է նախօրոք հարցերը ձևակերպել այնպես, դրանք աշակերտների միտքն արթնացնեն: Ուսուցչի աշխատանքի ինքնավերլուծությունը պետք է դառնա ուսուցչի աշխատանքի համակարգի անբաժանելի մասը: Մշակված դասի պլաններին անհրաժեշտ է համապատասխանեցնել ցուցադրական և դիդակտիկ, նաև էլեկտրոնային նյութեր:

## 1.1. ԴԱՍԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Դասի տիպերը: Դասը դասկարգում են ըստ դիդակտիկ նպատակների, գիտելիքների կազմակերպման նպատակների, դասի անցկացման միջոցների եւ բովանդակության, ուսումնական գործընթացի հիմնական փուլերի, դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների եւ սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների: Այս տեսանկյունից առանձնացվում են դասի հետեւյալ տիպերը՝

1. Նոր ուսումնական նյութի յուրացման դաս

2. Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների կատարելագործման դաս

(յուրացված նյութի նպատակային կիրառություն)

3. Ընդհանրացման եւ համակարգման դաս

4. Համակցված դաս

5. Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների շտկման եւ վերահսկման

դաս:

Դասի կառուցվածքը: Ուսումնառության ընթացքում առաջացած եւ

ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի

տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարը կոչվում է դասի

կառուցվածք: Ըստ կառուցվածքի դասերը լինում են՝

1. Նոր նյութի յուրացման դաս:

2. Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ամրապնդման եւ

զարգացման դաս:

3. Կարողությունների եւ հմտությունների ձեւավորման դաս:

4. Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների կիրառման դաս:

5. Կրկնողության դաս:

6. Կրկնողական-ընդհանրացնող դաս:

7. Ստուգողական կամ սխալների ուղղման դաս:

8. Համակցված դաս:

## 1.2 ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցման մեթոդները նպատակ ունեն ապահովել կրթության բովանդակության որակյալ յուրացումը: Կրթության բովանդակությունը գիտելիքների, կարողությունների եւ արժեքների միասնությունն է:

Ուսումնական աշխատանքի ճիշտ կազմակերպման, դրա արդյունավետության ու նպատակայնության համար ուսուցիչը, բացի իր մանկավարժական վարպետությունից եւ ուսուցման անհրաժեշտ պայմաններից, անպայման ձեռքի տակ պետք է ունենա տվյալ առարկայի պետական ծրագիրը, դասագիրքը կամ դասագրքերը եւ այդ առարկայի մեթոդիկան: Առանց դրանց վրա հենվելու, ուսուցիչը չի կարող ապահովել ուսուցման գործի ժամանակակից գիտամանկավարժական մակարդակը, ուստի այսօրվա դասը չի կարելի պատկերացնել առանց ծրագրի, դասագրքի ու մեթոդիկայի:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Սովորաբար պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մի դասարանում աշխատելու ժամանակ մեր կիրառած մեթոդները կարող են հաջողությամբ պսակվել, բայց մեկ այլ դասարանում կարող է լինել նաեւ հակառակը, քանի որ հարկավոր է հաշվի առնել դասարանի առանձնահատկություններ:

Շատ ճիշտ եւ հարմար է դասի պլանավորման ժամանակ առաջնորդվել ԽԻԿ համակարգով:

Ներկայացնենք դասի կազմակերպման մի քանի արդյունավետ մեթոդներ.

1. Քառաբաժան

2. Էստաֆետ

3. 5 րոպեանոց շարադրանք

1. 10 րոպեանոց շարադրություն

2. ԳՈՒՍ

3. Շրջագայություն պատկերասրահում

4. Պրիզմա

5. Կանխագուշակումների աղյուսակ

6. Խճանկար

7. Դերային խաղեր

8. Հեղինակի աթոռ

9. Խաղ-վիկտորինա

10. Քարտային աշխատանք

11. Տ-աձեւ աղյուսակ

12. Բառ-բանալի:

13. Վարդը , փուշը, կոկոն

14, Կենսագրական բանաստեղծություն

15.Խաթարված հերթականություն

16. Շրջագայություն պատկերասրահում

17. Պոպ  կորն

18. Երեք բանալի, մեկ կողպեք

19. Բառ-բանալի

20. Կենաց  ծառ

Սովորածը պարզելու հնարներ

Ես-Դու-Մենք Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դումենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

Կիսատ նախադասություն

Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել

«Խաթարված հերթականություն» Այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը. Պետք է նախօրոք պատրաստել թղթեր, վրան գրել

տեքստից ընտրված կարևոր անունները, փաստերը, իրադարձությունները: Դրանք խառը հերթականությամբ փակցնել գրատախտակին, հետո խնդրել, որ այն դասավորեն հերթականությամբ:

Կրթության ոլորտը փոխվում է այնպիսի արագ տեմպերով ,որ մենք պետք է հետևենք և հարմարվենք ավելի ժամանակակից ռազմավարություններին, հակառակ դեպքում մեզ համար կարող է դժվար լինի:Ի տարբերություն ավանդական ուսուցման , որը հիմնականում կենտրոնանում է այն բանին վրա, թե որքան գիտելիք կարող եք փոխանցել ձեր աշակերտներին , նորարարական ուղիները խորանում են այն բանի մեջ ,թե ինչ են իրականում դասաժամին վերցնում աշակերտները:

## Գլուխ 2. Հետազոտական աշխատանք

Կատարված աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել դասի պլանավորման արդյունավետ եղանակներ ,որոնք խթան կհանդիսանան ուսուցման արդյունավետության բարձրացմանը:Բարեխիղճ յուրաքանչյուր ուսուցիչ դասից առաջ նախապատրաստվում է,ծրագրում իր անելիքը `այն արտացոլելով դասի պլանում : Դասի պլանում ստորև տրվող նմուշներում դասանյութի բաժանումը,կիրառվող մեթոդներին և հնարներին ընտրությունը սոսկ կողմնորոշիչ դեր ունեն: Ուսուցիչն ազատ է ընտրելու այլ մեթոդներ ու կիրառելու որոշ մոտեցումներ

**Դասի պլան 1**

**Առարկա՝ Մարենի**

Դասարան՝ 5-րդ

Դասի տիպ՝ Համակցված դաս

Դասի թեմա- Վ.Տերյանի §Աշնան¦ բանաստեղծությունը , Է-ե ձայնավորի հնչյունափոխությունը

**Նպատակ - Իմանա՝**

1.Բանաստեղծության արտահայտած հիմնական գաղափարը, թեմատիկան և կառուցվածքը

2. Է-Ե ձայնավորի հնչյունափոխությունը և ուղղագրությունը, գրության և արտահայտության տարբերությունները ,

3. Բառապաշարի հարստացում

4. Բանավոր և գրավոր խոսքի կազմում

**Վերջնարդյունք- Կարողանա `**

1. Կարդալ վարժ,արտահայտիչ

2.Ընկալել տերյանական աշնան ազդեցությունը մարդու ներաշխարհի վրա

3.Գտնել և առանձնացնել տեքստում գլխավոր միտքն արտահայտող բառերը
4. Տեքստից դուրս գրել գեղարվետական պատկերավորման միջոցները

5. Վերարտադրել բանաստեղծության բովանդակությունը

6. Է-ե ձայնավորի հնչյունափոխությանը վերաբերող տեքստային աշխատանք

7. Գեղարվետական ստեղծագործության զգայական- գեղագիտական ընկալում ապահովել:

**Միջառարկայական մտեցումներ** Արվեստ- բանաստեղծության համար երաժշտության մեղեդու ընտրություն, ունկնդրում և կատարում, բանաստեղծության նկարազարդում , գրքույկի ստեղծում:

**Խաչվող հասկացություններ**- Անհատական և մշակութային արժեհամակարգ: Գաղափարներ,հուզմունքներ, բացահայտելու ուղիները, եզրահանգումներ:

**Մեթոդներ** – Զրույց , Դասախոսություն Քառաբաժան , 5 -րոպեանոց շարադրություն , Պոպ կորն , Քայլ առ քայլ :

Դասի ընթացքը -

Ստուգել տնայինները , Խթանիչ հարցերով ամփոփել դասը ,կատարել դասահարցում: **1. Խթանման փուլ**

Հանձնարարել 5 րոպեանոց շարադրանքով ներկայացնել աշնան տեսարան, որտեղ լինեն իշամեղու, սիել , իջնել բառերը:

**2. Իմաստի ընկալման փուլ**

Զրույց, Դասախոսություն մեթոդներով հակիրճ ներկայացնել Վ. Տերյանի մասին տեղեկություն: Կարդալ Աշնան բանաստեղծությունը , վերլուծել և բացատրել անծանոթ բառերը; Սովորողները կարդում են 5 րոպեանոց շարադրությունները:

Ուսուցիչը դուրս է գրում վերը նշած բառերը և տեաձև աղյուսակով ներկայացնում է-ե հնչյունափոխության կանոնները:

**3. Ուղղորդված գործնական աշխատանք**

Բանաստեղծությունից դուրս գրել պատկերավորման միջոցները, հնչյունափոխված բառերը՝ նշելով անհնչյունափոխ ձևերը:

Պոպ կորն մեթոդով աշակետները տուփից հանեն մեկական բառ և պատասխանեն

**4. Ինքնուրույն աշխատանք** .Փորձեք նկարագրել Վ.Տերյանի արտաքինը ,բնութագրել նրան,բնավորությունը,նկարազարդել բանաստեղծությունը, ստեղծել գրքույկ;

**5. Կշռադատում Կատարել անդարադաձ** Քայլ առ քայլ մեթոդով, գնահատել ,հանձնարարել տնային աշխատանք:

## Եզրակացություն

Այս հետազոտության արդյունքում եկանք այն եզրահանգման, որ դասի պլանավորման արդյունավետությունը՝ միայն ճիշտ եւ համակարգված դասն է օգնում հասնել ցանկալի արդյունքի, որովհետեւ դասի պլանավորման ժամանակ մեր առջև դնում ենք հստակ նպատակներ, մշակում այդ նպատակներին հասնելու ուղիներ, որոնք էլ տանում են դեպի նպատակների իրականացում:

Դասում կիրառված են եղել ավանդական եւ ժամանակակից մեթոդներ նաեւ ՏՀՏ,որոնք օգնեցին հասնել դասի նպատակներին: Այս հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ նման մեթոդների կամ եղանակների կիրառումը հետաքրքրում է սովորողներին եւ ճիշտ ընտրված միջոցները միայն կարող են օգնել ուսուցչին եւ ապահովել անհրաժեշտ վերջնարդյունք:

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդել առարկայի խոր և բազմակողմանի իմացությունը, այլև դրանց կենսագործման ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Այսօրվա դպրոցի ուսուցիչները փորձում են նորարարական ուսուցման ռազմավարությունը նոր պայմաններում՝ բազմազան կարիքներ ունեցող աշակերտներին ավելի շատ հետաքրքրելու և ներգրավվելու համար:

Ուսուցչի հետաքրքիր և բազմազան մեթոդների շնորհիվ աշակերտները կարող են հասկանալ թե ինչ են սովորել և ինքնուրույն պարզել այն ինչ նրանք դեռ պետք է իմանան: Աշակերտները կարող են հասկանալ ինչու սովորել որոշակի բաներ հետևաբար, ցանկություն կունենան ավելին սովորելու:

**Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ, գործիք և ուսումնասիրության արդյունք:**

**Լ.Վիգոտսկի**

## Գրականության ցանկ

1.Ա. Հ. Սվաջյան և ուրիշներ: <<Ուսուցչի օգնականի ձեռնարկ>>, մեթոդական ուղեցույց: Երևան 2022

2.Լաուրա Ասատրյան և Գրետա Հակոբյան <<Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն>> ուսումնական ձեռնարկ, ԵՐԵՎԱՆ Արտագերս 2011:

3.Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան, մեթոդական ձեռնարկ 2008 ք. Վանաձոր:

4.Սերոբ Խաչատրյան <<ՈՒսուցման արդյունավետ հնարներ>> Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020

5. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երեւան, 1980:

6. Կրթության, գիտության նախարարություն, Տեղեկագիր, Երեւան, 2011: